ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
01 հոկտեմբեր 2025 թ., արձ. թիվ 13

Վավերացնում եմ՝
ռեկտոր Հ. Զաքոյան
01 հոկտեմբեր 2025 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2025

1. Նշանակություն և կիրառման ոլորտ

Սույն ընթացակարգը նախատեսված է ՀԱԱՀ Միջազգային կապերի դեպարտամենտի (այսուհետ՝ ՄԿԴ կամ Դեպարտամենտ) գործունեության արդյունավետության գնահատման և որակի ապահովման համար: Ընթացակարգի նպատակն է մշտադիտարկման և քննարկումների միջոցով գնահատել Դեպարտամենտի գործունեության արդյունավետությունը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերն ու բազմակողմանի վերլուծության միջոցով նպաստել Դեպարտամենտի աշխատանքի բարելավմանը՝ Համալսարանի ռազմավարական ծրագրի դրույթներին համապատասխան:

2. Փաստաթղթային հենք

- ՀԱԱՀ կանոնադրություն
- ՀԱԱՀ ռազմավարական ծրագիր
- Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման մեթոդաբանություն
- Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր
- Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման, մշտադիտարկման և որակի ապահովման գործող քաղաքականություն և ընթացակարգեր

3. Ընթացակարգ

Դեպարտամենտի աշխատանքի արդյունավետության գնահատումը պետք է լինի պարբերական գործընթաց՝ ինքնագնահատման (կամ ներքին) և արտաքին (ՀԱԱՀ շրջանակներում և դրանից դուրս) գնահատման միջոցով:

Ինքնագնահատումը կամ ներքին գնահատումը ենթադրում է.

- Դեպարտամենտում քննարկումների պարբերաբար անցկացում և խնդիրների վերհանում:
- Դեպարտամենտի կողմից շահառուների հետ կազմակերպվող հարցումներ:
- Ֆոկուս խմբերի հետ կազմակերպվող քննարկումներ:
- Դիտարկումներ:

Արտաքին գնահատումը ենթադրում է.

- Դեպարտամենտի կողմից կազմված հաշվետվությունների քննարկում և աշխատանքի գնահատում:

▪ Արտաքին շահառուների հետ իրականացվող հարցումներ և վերլուծություններ:

▪ Համալսարանի Որակի ապահովման բաժնի կողմից Դեպարտամենտի գործունեության վերլուծություն՝ որակի կառավարման չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան՝ ըստ ԳԱՑ-երի:

▪ Ֆոկուս խմբերի հետ քննարկումների անցկացում:

4. Արդյունքներ և գնահատական

Վերլուծության արդյունքներն ու գնահատականը քննարկվում է Դեպարտամենտում, Համալսարանի գիտական խորհրդում, որից հետո կարող են տրվել համապատասխան հանձնարարականներ՝ արձանագրված խնդիրների շտկման վերաբերյալ:

5. Արդյունավետության և գործունեության չափման ցուցիչներ

ա. Ընդհանուր ռազմավարական.

- Դեպարտամենտի քանակական ցուցիչների համապատասխանություն ՀԱԱՀ ռազմավարական նպատակներին և ԳԱՑ-երին:
- Դեպարտամենտի գործունեության տարեկան աշխատանքային պլանի ռազմավարության առկայություն և իրագործում:
- Գործընթացների համակարգվածություն և թափանցիկություն:

բ. Միջազգային կապերի կառավարում.

- Միջազգային գործընկեր հաստատությունների թիվը:
- Միջազգային համագործակցության համաձայնագրերի թիվը և կիրառելիությունը:
- Գործընկերների հետ ակտիվ համագործակցության հաճախականությունը:
- Նոր վավերացված համաձայնագրերի թիվը վերջին տարում և դրանց իրականացումը:

գ. Շարժունության ծրագրերի արդյունավետություն.

- Սովորողների շարժունության և կրկնակի մասնակիցների թիվը՝ նաև տոկոսային ցուցիչով:
- Աշխատակիցների շարժունության և կրկնակի մասնակիցների թիվը՝ նաև տոկոսային ցուցիչով:

- Հասանելի ծրագրերի քանակը և ֆինանսավորված դիմում-հայտերի տոկոսը:
- Համալսարանի ստորաբաժանումների ընդգրկվածության աստիճանը:
- Շարժունության արդյունքների ճանաչումը և տեղայնացումը:

դ. Միջոցառումների և նախաձեռնությունների արդյունավետություն.

- Կազմակերպված միջազգային համաժողովների և աշխատաժողովների քանակը:
- Մասնակիցների՝ տվյալ ծրագրից ունեցած ակնկալիքների բավարարվածության մակարդակը (հետադարձ կապի միջոցով):
- Աշխատակցիների և սովորողների ակտիվության և ներգրավվածության մակարդակը:

ե. Հանրայնացում,տեղեկատվության տարածում և գործունեության թափանցիկություն

- Դեպարտամենտի կայքէջում և սոցիալական հարթակներում տեղեկատվության շարունակական թարմացում:
- Տեղեկատվության հասանելիության ապահովում ներքին և արտաքին շահառուներին:
- Դեպարտամենտի կողմից հանրայնացված տեղեկատվության քանակական ցուցանիշ:

զ. Աշխատակիցների մասնագիտական զարգացում

- Դասընթացներին և վերապատրաստումներին մասնակցության թիվը, մասնակիցների ձեռք բերած գիտելիքների, փորձառության գործնական կիրառելիությունը:
- Բուհական միջազգային նորագույն ուղղվածությունների իմացությունը: